

450

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

1-2
ԱԼԱԶԱՆ

Պ
Ո
Շ
Մ

ԳՅՈՒՂԻ
Մ Ա Ս Ի Ն



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՎԵՊՊ-Ի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԻՆԻ

№ 2

891.99

Ա-28

ԹԻՖԼԻՍ—1926

06 DEC 2010 30 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՍՍՈՑԻԱՅԻԱ

(Վ.Ս.ԳԳ)

receiving access point - nuclear

891.99 48.
12-28

ԱԼԱԶԱՆ

Պ Ո Ե Մ

ԳՅՈՒՂԻ ՄԵՍԻՆ

4/5



6289

ՄՈՍԿՎԱ

ԹԻՖԼԻՍ—1926

ՅԵՐԵՎԱՆ

- .01. 2013

0105 330 80

17.748

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԴԵ

1

Գյուղում ապրուստը դժվար էր ճարել,
Գյուղը աղքատ էր ու քյոխվեն զալում,
Սովը յեկել էր, դռանն էր չոքել—
Նրանք խրճիթում՝ վոսկրոտ ու դալուկ:

Կինը հայացքը հառում էր մարդուն,
Ու մարդը տխուր՝ նայում էր կնոջ,
Ինչքան էլ նրանք միտք արին անդուլ —
Չը գտան հնար և վոչ մի գնով:

— Կնիկ, հագես ել ապրուստ չի լինի,
Յես գյուղում ձեզ հաց ճարել չեմ կարող,
Աբի ինձ լսիր ու դեմ մի լինիր,
Թող գնամ քաղաք մի քանի տարով:

— Քաղաքում գործը ասում են բոլ ե,
Քաղաքում փող ել կստանամ առատ,
Եստեղ դուք կապրեք մի քիչ լավ գոնե,
Ու հարստացած յես յետ կդառնամ:



5225-55

Գրառեպլար № 671

Թիֆլիս

Տիրաժ 2000

Թիֆլիս Ժ.Տ.Գ.Խ. Պոլիգ.-տրեստի 4-րդ տպ. Պուշկ. փ. 3.

2

Յերկար միտք արին կնիկն ու մարդը,
 Յերկար խորհեցին գիշերներ անքուն,
 Խնդիրը լուրջ էր, խնդիրը բարդ էր,
 Լուծելը՝ դժվար, կարիքը՝ անգույթ:

Բայց մարդը մի կերպ համոզեց կնկան,
 Վոր քաղաք գնա մի քանի տարով:
 Յեվ մի առաւոտ ճանապարհ ընկավ,
 Ու վերջին խոսքը—«Մնացիք բաւով»:

3

Մի քանի ամիս անց կացավ լացով,
 Յերբ վոր քաղաքից ստացվեց նամակ,
 Մարդն ընտանիքին իրա բերանով—
 Գրել էր սովել մի յերկնս նամակ:

— «Կնիկ ջան, գործս լավ է բավական,
 Բանում եմ Բագվում, մի նավթահանքում,
 Շատ եմ չարչարվում, որական տաս ժամ,
 Սակայն ինչ արած, փող եմ ստանում»:

— «Ուղարկում եմ քեզ 15 մանեթ,
 Ծախսիր տան վրա, յերեխոց վրա:
 Յերեխաներին համբույր ու բարև:
 Գրիր, ինչպէս եր ապրում դուք հիմա...»:

Սառն ժպիտ յեկավ կնոջ յերեսին,
 Կարծես թե կյանքը փոխվում էր արդեն.

Ել քյոխվի ձեռին չեն դառնա յեսիր,
 Պարտքերը կտան, աչքը կթարթեն:

4

Եղպես անց կացան որեր, ամիսներ,
 Եղպես անց կացան մի քանի տարի.
 Կնոջ աչքերը—մարդու ճամբին էր,
 Սպասում էր յերբ կգա իր դարիք:

5

Մի որ ել—աշուն: Որը տխուր էր:
 Աշնան պես լացող մի նամակ յեկավ.
 Նամակի հետն ել սրտամաշ յուրեր:
 Նորից ծանրացան որերը կնկա:

— «Միւրելի կնիկ, բանտումն եմ նստած,
 Գործադուլ արինք ու մեզ բանտ տարան:
 Բայց մենք կհաղթենք, դու յեղիր վստահ,
 Ինչքան ել տերերն անդիջող դառնան:

— «Բանտում տխուր են անցնում որերըս,
 Դուք եր ծանրացել իմ հոգու վրա.
 Քեզ ու յերեխոց համբույր ու բարև,
 Միրտս լցվել է կարոտ ու կրակ»:

Կինը արցունքով թրջեց նամակը,
 Ապրելու համար ել միջոց չկար,
 Ծանր ու դժվար էր նրանց վիճակը,
 Ո՞վ պիտի ոգներ, ո՞վ պիտի գթար:

Գյուղում ապրուստը դժվար եր ճարել,
Գյուղը աղքատ եր ու քոխվեն՝ զալում.
Սովը յեկել եր, դռանն եր նստել,
Նրանք խրճիթում՝ վոսկրոտ ու դալուկ:

Կ Ի Ն Ը

1

Նրա մարդը՝ ել յետ չեկավ մեծ քաղաքից:
Նրա մարդը՝ մեռավ բանտի հատակին թաց:
Կինը տխուր՝ յերկար նայեց նրա ճամբին,
Ու վերջին որ աղեկատուր նա հեծկլտաց:

Յերկարորեն նա հեծկլտաց դառն ու աղի,
Յերկարորեն նա սուգ արեց սրտամորմոր.
Կորուստը իր՝ ծանր եր ու մեծ, անդառնալի,
Մնացել եր նա վորբերով խեղճ ու անող:

Նրանց կյանքը՝ մահվան քամու բերան մնաց,
Գամին նրանց կյանքի թերթեր գետին թափեց.
Մայրը անող՝ իր վորբերին զրկած մնաց,
Ու սովը չար՝ նրանց մզլած տունն շտապեց:

Ել դուրս չեկավ նրանց յերթկից կապույտ ծուխը,
Ու մարեցավ թոնիրի մեջ բոցն ու կրակ.
Վորբուկները թափառեցին գյուղումն անտեղ,
Ու մայրն աղքատ՝ ձեռք յերկարեց սրան-նրան:

Վորբուկները մուրացիկներ դարձան փոքրիկ—
Աչնանային ճյուղերի պես դողողացող,

Կյանքի դաժան պայքարների մեջ վոտը դրին,
Ու թրջեցին չոր հացն իրանց դառըն լացով:

ԴԵՊՈՒ ԲԱՂԱԿ

1

Քաղաքը լայն ե, նա կընդունի ամենքին,
Քաղաքին տուր—թե վոր ունես ուժ ու մկան,
Յե՛վ թարմություն, ե՛ Եփան ձեռք հանձնիր նրան—
Քաղաքը լայն ե, նա կընդունի ամենքին:

Մայրը՝ բանվոր դարձավ մի մեծ գործարանում,
Մայրը՝ դարձավ մեքենայի մասն անբաժան.
Մեքենային հանձնեց ուժերն ու մկանունք,
Յեվ հաշտվեց կյանքի հետ այդ դառն ու դաժան:

Յերբ արևը իջնիր դեմի լեռան յետև,
Յերբ լույսերը պսպղային փողոցներում—
Կը գար մայրը, մռայլ դեմքով ու հոգնաբեկ,
Գործարանից դեպի իրանց տունը հեռու:

Ամեն որ նա հետն եր բերում մի մեծ սև հաց,
Ու յերբեմն ել մոտիկ ծովի ձուկ, կամ պանիր,
Ընթրում եր իր վորբերի հետ լուռ, զխահակ,
Հետո պատմում իրանց գյուղի ու հոր մասին:

2

Այսպես անց կացան որեր բավական,
Ու գարունը վառ՝ դարձավ ցուրտ ձմեռ,

Քաղաքը ծածկեց ձյունի սալանը,
Քամին եր վռնում քաղաքում անվերջ:

Դողում եր մայրը քամուց ու ցրտից,
Ճամբան յերկար ե և ցուրտը բիրտ ե,
Ու ինչ վոր մի բան կպել ե կրծքից,
Ծծում ե անվերջ թոքերն ու սիրտը:

3

Գալիս եր մայրը դողդողալեն ու կապտած,
Ցուրտ խրճիթում գրկում եր պինդ իր վորբերին.
Սառ անկողնում դողում եյին իրար գրկած,
Մինչև քունը վրա հասներ ու քնեյին:

Բայց մի առավոտ անկողնից վեր չելավ նա,
Մայրը պառկած մնաց այդ որ անկողնում,
Վորդիները յերկար խնդրեցին նրան,
Բայց մայրը անուժ մնաց անկողնում:

4

Հիվանդ ե մայրը,
Անող ե մայրը,
Ընկել ե մայրը—
Հատակին թաց:
Հազում ե մայրը,
Թոքերը վատ են,
Թուքը՝ արյուն ե—
մոր:

Վորբերը մենակ,
Վորբերը անող,
Վորբերն ինչ անեն:
Մայրը՝ հիվանդ ե,
Ո՛ր, մայրը վատ ե,
Թոքերն ել՝ վատ են,
Թոքերն ել՝ վատ են—
մոր:

Վորբերը ջուր են քսում մոր ճակատին,
Շոյում են ճակատը չորցած ափերով,
Վորբերը կպած տան մրոտ պատին—
Դողում են մահից դառն յերկյուղով:

Բայց մայրը վատ ե,
Բայց մայրը ծանր ե,
Մեռնում ե մայրը—
Ոգնեցեք!
Վորբերը խեղճ են,
Վորբերն անող են,
Վորբերը մենակ—
Ոգնեցեք!

5

Լալն փողոցի մի անկյունում իրար գրկած—
Դողում եյին յերեկոյան յերեք մանուկ.
Նրանց մայրը՝ մեռավ հյուղի հատակին թաց,
Նրանց հայրը՝ դաժան բանտից ել չեկավ տուն:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Գ Յ Ո Ւ Ղ Ո Ւ Մ

Նրանց գյուղն ազատ ե հիմա,
Սովետական, նոր.

Սուրբ Գեորգի դիմաց—
Պիտներ ու կոմսոմոլ:

Գյուղում կոմբլիշ չկա,
Կոմսոմոլն ել թույլ ե.
Գյուղում կյանքը աղքատ,
Անուշտ ե:

Գյուղումն ապրում են դեռ—
Սուրբ Գեորգն ու քյոխվեն.
Ու սպասում թե յերբ—
Կարգերը կը փոխվեն:

Նրանք քաշում են պլաններ,
Մտածում են մեկտեղ,
Խեղճ Կոմսոմոլ ջահել,—
Մենակ վոնց անես:

ԿՈՒԼԱԿՍՍԻՆԸ

— Կնիկ, եդ Բոնցոմոլ քյադեր
Հանգիստ չեն տալիս.

Իրանց ժողովներումն ամեն—
Խոսում են մեզնից:

— Փորում են մեր վոտների տակ,
Փորում են գիշեր ու ցերեկ:
Իմացար են ինչ եր դրած
Պատի դադեռի մեջ:

— Չե Ալմաստ, պետք ե գտնել ճար,
Մի խորամանկ միջոց,
Ու պնիկը դրանց—
Յրիվ տալ միջից:

ԲՋՈՒՋՈՒՄ

1

Արդեն բոլորն իմացել են,
Բջիջն ամբողջ գիտի,
Կուլակ Արտուշը դիմել ե—
Վոր Կոմսոմոլ մտնի:

— Բա ընչի:
— Ի՞նչն ե պատճառը:
— Չե՞ վոր նա դեռ յերեկ
Կովում եր մեր դեմ,
Մեղ ձեռ եր առնում
Ու անվանում՝ գյադեք:

— Եստեղ մի «ե» կա, տղերք,
Մի ոյին կամ թե,

Աչքարաց յեղեք—
Զխարվենք:

2

— Ինչո՞ւ յես մտնում կոմսոմոլ,
Զե՞ վոր դու դեմ էյիր մեզ:

— Դա դեռ յերեկ եր,
Իսկ այսօր—
Յես գալիս եմ ձեզ հետ:

Յես դեմ եմ կուլակներին,
Ինչպես և մերոնց,
Կը կործանենք մինք նրանց—
Միացյալ ուժերով:

Ավելի լավ պատասխան—
Ո՞վ կարող եր սպասել:

— Նա գալիս է անկեղծ:
— Նա մեզ հարազատ է:
— Ընդունել!

— Ո՞վ է դեմ:

— Զկան:

— Զեռնպահ:

— Զկան միթե:

— Ընկեր Արտուշ!
Ընդունված ես միաձայն:

ԳՅՈՒՂԻ ԿԱՐԾԻՔԸ

1

Գյուղն արդեն գիտե,
Լուրը ձեն է տվել՝
— «Քյոխվա Մեկոյի տղեն
Քոնցոմոլ է գրվել»:

— Ընչի՞ յե գրվել:
— Ի՞նչ է պատճառը:

— Վայ իր հորն ու մորը:

— Ախրը ի՞նչ ա գտել
Եդ գյաղերանց մոտ:

— Ո՞վ գիտի,
Ասում են—
Բաժանվել է հորից:

— Եդ տղեն՝
Վոր հրեշտակի պես եր—
Աստվածն ուրացել է:

— Հե՛յ գյիղի,
Քյոխվա Մեկոյի վերջն էլ—
Յերևի ևս եր:

2

Ու թողի են ելե ժամի դռանը—
Աղսախկալ ու քեթխուդա,

Արտուշի հարցը՝ «ժողովի» դրած,
Վիճում են եղպես անընդհատ:

Ու վոչ վոք չգիտի պատճառը—
Թե նա խի՞ գրվեց Բոնցամոլ,
Կամ թե ինչ կլնի նրա հոր ճարը—
Թե ելի չդառնա նրա մոտ:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Բ Զ Ի Զ Ի Ն Ե Ր Ս ՈՒ Մ

1

Արտուշը աչքի գարնվեց արդեն,
«Պատրաստված» է նա ու ակտիվ:
Նրա մտքերը՝ բավական բարդ են,
Սակայն ո՞վ գիտի:

Նա ունի կողմնակիցներ շատ,
«Ախպեր տղաներ» ու մտերիմներ.
Յեւ եղպես կամաց կամաց—
Նա իր թափփան հիմնեց:

Բյուրոն հինգ հոգուց է,
Յերեքն Արտուշի հետ են,
Ի՞նչ ել անեն յերկուսը—
Անոգուտ է,
Մեծամասնությունը կը հաղթե:

Յերեքն ու Արտուշը—
Մեկտեղ են միշտ,
Թե տանը, թե դուրսը,
Թե ժողովում:

«Ախպեր տղերք» են,
 Խոսում են անկեղծ,
 Փնտռում «ճիշտ» գիծը—
 Վոր բջիջը զեկավարեն:

Նրանք շատ են լինում Արտուշենց տանը,
 Առանձին սենյակ ունեն ենտեղ.
 Ժողով են անում դռնավակ,
 Հարցերը գրեթե վճռում ենտեղ:

Ժողովից հետո —
 Ճաշ կամ ընթրիք:
 Գաթա ու կարագ:
 Հավի մսով փլավ:
 Մի-մի թաս արագ:
 Ծափ ու խնդում:
 Կոմերիտական քեֆից—
 Կուլակի տունն է թնդում:

2

— Տղերք, անկեղծ եմ ասում,
 Յես դեմ եմ կուլակներին,
 Բայց դե, ի՞նչ արած,
 Պետք է հպատակվել—
 Կուսակցության դժին:

— Տասնըչորսերորդ կոնֆերանսի
 Վորոշումը գիտե՞ք,
 Յես կարդացել եմ,

Կուլակներին լո՛ւ թե խփել,
 Այլ— ոգնել:

— Զնայած սրտով դեմ եմ,
 Բայց ի՞նչ արած,
 Պետք է յենթարկվել:

— Մեր գյուղում կոմբիջ չկա,
 Կուսակցության հույսը—
 Մեզ վրա յե.
 Պետք է արդարացնել այդ,
 Ու ճիշտ գիծ տանել զրա հետ:

— Մեկ էլ,
 Ռազմական կոմունիզմը—
 Վաղուց է անցել, տղերք,
 Յեկեր մեր գիծը—
 Բիչ էլ մենք ուղղենք:

— Ի՞նչ ենք գտել եղպես,
 Միշտ ժողով ու պարապմունք,
 Մենք էլ ջանք ենք,
 Ունենք սիրտ ու պայքար:

— Հիմա մեր բանջարում,
 Ի՞նչ է կատարվում ճիշտը,
 Ամեն ուրիշից
 Կոմսոցիտը:
 — Ինչ ասեր...

— Ճիշտ ես ասում, Արտուշ,
 Քեզ հետ համաձայն ենք:

55-5725

45



3

Նորից Արտուշենց տուն,
 Նորից գաթա, կարագ,
 Բյուրոն քեֆ եւ անում:—
 Գինի ու արաղ:
 Ծափ ու խնդում:
 Հետո թղթախաղ:
 Կոմերիտական քեֆից—
 Կուլակի տունն եւ թնդում:

Մյուս կողմից կամաց-կամաց—
 Արտուշ նրանց խելքն առավ:

4

— Եղ կուլակի մտքերը՝
 Թարս են,
 Բջիջն ուզում եւ քանդել,
 Տղերք,
 Բյուրոյի մեծ մասը—
 Չեռքն եւ առել,
 Աչքաբաց յեղեր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԳ

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՈՒԽՏԸ

1

Վոնց վոր ավերված մըջյունի բույնը—
 Խժժում եւ շուրջը ժամի.
 Իրար են խառնվել հազար ուսնդ ու գույն,
 Փեսա, քավոր ու խնամի:

Հազար ուսնդի լաչակ,
 Հազար ուսնդի քթկալ,
 Հազար տեսակ մետաղ
 Ու աղջիկներ հասած:

Զիլ զլիլ եւ գուռնան,
 Պարը դառնում անդադար,
 Իրար կուռը բռնած—
 Թռչում են անընդհատ:

Վոնց վոր հարյուր պառավ հավաքվին իրար,
 Կողք-կողքի նստեն ու պլտպլտան,—
 Պըպըզել են եղպես ոջախների վրա
 Սև պղինձները քլթթթթթթթ:

Ու ելի, զիլ զլեւ ե գունան,
Շուրջը կեր ու խում ու մատաղ:
Իրար կուռը բռնած—
Դառնում ե պարն անընդհատ:

Բըզզում ե Աստվածածինը —
Վոնց վոր մեղրի փեթակ.
Մի տեղ հարս են ընտրում,
Մյուս տեղը՝ փեսա:

2

Բայց հանկարծ—
Տընք, տընք, տընք,
Լավեց հրացանի յերեք զարկ.
Ու իրար գլխի վրա—
Վանքն ամբողջ իրար անցավ:

— Ո՞վ կարող եր կրակել,
Հրացան արգելված ե,
Կամ «քոնցոմոններն» են,
Կամ, միլիցեն:

ԳԵՊԵՒ ՎԱՅԻԸ

1

Եստեղ են բջիջի հինգ անդամը,
Ու բյուրոյից յերեքը,
Քեֆ են անում, հեղափոխական—
Հրացանն ել հետները բերել են:

Եստեղ ել ընկել ե գետին—
Ծերուկ Ովակը գլխապատառ.
Ու նայում ե նրա դիակին—
Բջիջի բյուրոն մարդասպան:

Եստեղ ե և Մարուսը խելակորույս,
Մազերն ե փետտում գլխի,
Ցավը ծանր ե ու խորունկ—
Ի՞նչ անի:

2

Անցել ե Մարուսն եղտեղից,
Արտուշն աչքով ե արել.
Ընկել ե նրա յետևից —
Ուզեցել նրան համբուրել:

Պատմել ե Մարուսն հորը ծեր:
Հերը՝ մի մահակ իր ուսին,
Յեկել ե տեսնի, ռվ ե ձեռք գցել —
Իր ազապ աղջկա նամուսին:

Նա թքել ե Արտուշի յերեսին,
Հայհոյել նրան անխնա:
Պատասխանը կոմյերխտական—
Հրացանից կրակ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բ Զ Ի Զ Ի Ժ Ո Ղ Ո Վ Ը

1

Եդ որը բջիջի ժողով կար,
Հավաքվել են դիփ դպրոցի դռան,
Բայց վոչ բյուրո կա, վոչ քարտուղար,
Գյուղումն էլ չեն դրանք:

— Ո՞ւր են:

— Ո՞ւր են գնացել:

— Ո՞ւրստ:

— Զի կարող պատահել:

— Ինչո՞ւ չե:

— Եդ կուլակը խափած կլնի:

— Ինչու ընդունեցինք եդ փուչին,

Վոր գա մեզ քանդի՞:

Ու վիճում են անընդհատ,

Յեզրակացության չեկած.

Մեկ ել վոնց վոր կայծակ՝

Լուրը գյուղն ընկավ:—

— Բյուրոն խփել ե Ուլակին,
Ուղեցել Մարուսին փախցնի:
Բջիջ, ականջդ փակիր,
Եդպես լուր կլնի՞:

Ու շըջմել ե բջիջը,
Դիփ քարացել են,
Լսածներն ես ի՞նչ եր,
Ի՞նչ անեն:

— Խայտառակվեցինք
Վողջ բջիջով, գիտե՞ք,
Իսկ ի՞նչ կասի—
Կոմիտեն:

— Տղերք, յեկեք վաղն իրիկուն,
Հավաքենք նոր ժողով,
Քշենք դրանց դիփ դուրս,
Ընտրենք նոր բյուրո:

ՀԱՐՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԶԻՋՈՒՄ

1

— Զուկը գլխիցն ա հոտել, ընկերներ,
Սադ գյուղումն հլանք խայտառակ.
Մեծ մեղավորը՝ հենց մեր բյուրոն եր—
Վոր դրանց ծուռ ճամբով տարավ:

— Արտուշը թարս մտքեր ունի,
Նա անհարազատ ա մեզ,

Թեկուզ բջիջն ելի չընդունի—
Յես ելի պնդում եմ դժբա անել:

— Արտուշը «թեքումներ» ունի,
Նա դաստու յա մտել մեր մեջ,
Յես եղ վաղուց գիտեյի,
Ընկերներ:

— Բա մեր բյուրոն,
Բա մեր ակտիվները՝
Թե զրուստը կուղեք—
Դիփին պետք ա դուրս անել:

— Ախր հնգերներ, մարդը սխալական ա,
Մենակ լենինն ա անսխալը.
Դեն Արտուշն ել—յեղել ա հարփած,
Վոր արիւ ա եղ քայլը:

— Ձենդ կտրի, կըծկված վառել,
Հըլա սրան, հըլա թամաշ,
Գլխներիս վրեն ակտիվ ա դառել,
Կուլակին ա պաշտպանում թերամաշը:

— Տո, դու են չեյլօր, պիանից գյադն,
Վոր պսակվեցիր կարմիր պսակով,
Հետո թաքուն-թաքուն ձեր թոնրի վրա—
Եշի պես ծոցերի վզակոթը,
Վոր տերտերն ավետարան կարդա:

— Դու եյիր պակաս կարտոժնիկ լակոտ,
Կարտ խաղալով թոնրի ջուլը մաշեցիր:

— Ձենդ կտրի, չորթանի գող, խնքոս:
Ժողովը դարձավ դամադալ ու կռիվ:

— Ընկերներ, ընկերներ,
Կարգ պաշտպանեցեք,
Ըսենց ժողով չի լինի,
Ընկերներ:

2

Սակայն ի՞նչ անի նախագահը,
Վճնց դեկավարի,
Ամեն մեկն իր նախագահն է,
Կարճ էս, վարի:

Յերկար խոսեցին, յերկար ճչացին,
Ժողովը յերկար ձրգձրգվեց,
Բանը հասավ մինչև ուշունցին,
Բայց խնդիրը չը լուծվեց:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆԵՐՔԻՆ ՊԱՅՔԱՐ

1

Բջիջն յերկու մաս ե գառել,
Յերկու թայֆա,
Արտուշ քլունգն առել—
Քանդում ե քար առ քար:

Կովում ե ինքն իր մեջ,
Կովում ինքն իր դեմ.
Բջիջն ինքն իր մեջ—
Քայքայվում ե արգեն:

2

Արտուշը բանտարկված ե,
Բայց թայֆեն կա դեռ,
Նա սպառնում ե—
Վողջ բջիջը քանդել:

3

Գյուղում կոմբջիջ չկար,
Կոմսոմոլն ել—թույլ եր,

Գյուղում կյանքը տկար
Ու անույժ եր:

Գյուղում ապրում են դեռ,
Սուրբ Գևորգն ու քյոխվեն,
Ու սպասում թե յերբ—
Կարգերը կփոխվեն:

Նրանք քաշում են պլաններ,
Մտածում են մեկտեղ.
Կոմսոմոլ, անփորձ ջահել—
Մենակ վոնց անես:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Շ Ե Ֆ Ը

1

Գարաժի բջիջն եր շեֆը գյուղին,
Գյուղը հեռու յեր 40 վերստ:
Ու ես յերեք ամիս եր ուղիղ—
Բջիջը գյուղ չեր յեկել հեշ:

Ես անգամ նրանք յիկան գյուղի,
Բջիջում ինչե՛ր չը տեսան,
Խոր մի կռիվ կա բջիջի ներսում,
Բջիջը՝ սուր ու հասան:

2

— Պետք է դարձան գտներ,
— Պետք է գտնել ճար,
— Պետք է գյուղին թողնել
Մի բանվոր քարտուղար:

Ու բջիջը վճռեց,
Վորպես նվեր գյուղին,
Մի քարտուղար ղրկել
Իր անդամներից հին:

— Թե միջոց ել չլնի,
Թեկուղ և վոտքով
Պետք է գյուղը գնալ
Ամեն շաբաթ ուր:

— Պետք է վոտքի հանել
Բջիջը մեռնող,
Բջիջից դուրս վանել
Թայֆան խելացնոր:

ԲՋԻՋԻ ՎԱՐՏՈՒՂԱՐԸ

1

Գյուղում հասարակական ժողով կար,
Հավաքվել են դիփ դպրոցի բակում.
Եղ տեղն է գյուղի ժողովասրահը,
Գյուղում վոչ դահլիճ կա, վոչ աղումը:

Խոսում է քաղաքից նոր եկածը,
Թաղա քարտուղարը Կոմսոմոլի.
Կենդանացել է գյուղի յերակը
Հավաքվել է Կոմսոմոլը դիփ:

2

— Վոնց վոր թե ճանաչում եմ դրան,
Վոնց վոր թե դրան տեսած ընեմ:
— Վոնց է խոսում վոազ-վոազ,
Իր հորն ու մորը հազար երեսեկ:

— Վո՞նց չե, վո՞նց չես ճանաչում,
Աւոյենց Ակոբի տղեն չի:
Ձեռ հիշում, հերը վոր գնաց Բագու:
— Յարար լի՛նչ ելավ մերը եդ խեղճի:

— Ի՞նչ, չեմ հավատում,
Են խըլընքոտ, անփոխան գյաղեն—
Մեծացել,
Ըսենց մարդ ա դառնի:

— Վոնց ել բոյ ե քաշել,
Վոնց ել մեծացել,
Ողորմածիկ հերը—
Մի սաղ ընիւր տեսներ:

Ու ժողովի նյութը թողած—
Խոսում են եդ որվա զեկուցողից,
Շատերն մտածկոտ են, շատերն ել ուրախ—
Վոր եղպես մարդ ե գուրս յեկել գյուղից:

3

Կարոն ել հիշեց հինը, հին գյուղը,
Տնակը իրանց անլույս ու աղբատ
Քաղցի որերը պարտքն ու յերկյուղը—
Յերազի նման միտն եկան հանկարծ:

Նա հիշեց իր հոր, վոր վերջին անգամ
Համբուրեց իրան ու ճամբա ընկավ,
Հիշեց և մորը, բանվոր մորն անկար—
Մահամերձ, անոգ հատակին ընկած:

Կարոն իր մտքում անցյալը դիտեց,—
Անցյալը՝ մեռած ու կորած անդարձ.
Բայց Կարոն յերկար տխրել չգիտե,
Գործը կանչում ե—դեպի աշխատանք!

Գյուղում Կարոյի գործերը շատ են,
Գյուղում քանի՛ գործ, քանի՛ աշխատանք,
Գյուղկոմսոմոլը—անկար, ուժատ ե,
Հարկավոր ե գործ, հարկավոր ե ջանք:

ԲՋԻՋՆ ԱՇԽԱՏԱՆՈՒՄ Ե

1

Կարոն դիտեց շրջապատը,
Ուսումնասիրեց յերկար.
Աշխատանքը՝ բազմազան ու բարդ եր,
Խոչնդոտները՝ շատ:

Պետք եր բռնել ճիշտ յերակից,
Ցավոտ տեղը դարմանել,
Ու բջիջն անգիտակից—
Պետք եր գրագետ դարձնել:

Պետք եր գլուխ բերել շտապ
Մի ակումբ ու մի բեմ,
Ու բջիջի աշխատանքը—
Կապել ակումբի հետ:

2

«Ռեժիսյորը» շոֆֆեր Կարոն է,
 Կոմսոմոլը՝ «Թնտերախումբ».
 Բջիջը՝ նորազարթ գարունն է,
 Բջիջի տունը՝ ակումբը:

Բջիջը խաղալ է սովորում,
 Սովորում է յերգել.
 Զորան Սերգոն է կատարում
 Գեներալի դերը:

Բատրակ Գերովը կապիտալիստ է,
 Ովակիմը՝ տերտեր,
 Զոփուռ Մնոյին է ընկել—
 Պրոլետարի դերը:

Ինչպես էլ վոգեռովել են,
 Վոնց են կպել բեմից,
 Ամեն բանից վեր է—
 Կյանքն ակումբի, բեմի:

3

Լիկկայան էլ է բացվել,
 Կարոն է պարապում ենտեղ,
 Շոֆֆեր Կարոն դարձել է—
 «Ռեժիսյոր» ու «վարժապետ»:

Ել հւր են գինին և թուղթը,
 Ուր ուշուցն ու զալմաղալ,

Ուր Աստվածածին, ել ուր է ուտիւր,
 Ուր բջիջը բար ու քանդ:

4

— Համա լազաթ ա, գիտե՞ս,
 Ես մեր քարտուղարը,
 Թե ես ել չըլնեի,—
 Ի՞նչ կլնեի մեր ճարը:

— Վոնց էլ խաթրով ու գոռով՝
 Բջիջը թամբեց.
 Մեր գյուղն իրա որով—
 Ըսենց մարդ չեի տեսել:

Ու խոսում է բջիջը վողջ,
 Կարոն հերոս է բջիջում.
 Բջիջը հաղթող է ու առողջ.
 Վոչ վոքի վոչ մի գիջում:

Վ Ե Ր Զ Ե Ր Գ

1

Եսպես ե, քյոխվա Մելն,
Թե քանդես ել մեզ գյուղում—
Քաղաքից կը գանք խմբերով,
Պլանըդ չի աջողում:

Իսկ մեր կոնակից դեռ կա—
Պրոլետարիատը Ռուս,
Մերն ե նորը, ներկան,
Ու պատմության ուղի:

Կա դեռ քանակը մեր—
Համաշխարհային,
Մենք դեռ մի ողակն ենք
Հսկա շղթայի:

2

Մեր ճամբան դեպի Սոցիալիզմ—
Գծել են Մարքսը, Լենինը,
Այդ ճամբով կանցնենք ձեր գյուղից—
Կոխ տալով հինը:

Կը կորչեն մեր ճամբի փոշում—
Հազար Սուրբ Գեորգ ու կուլակ.
Ձերը՝ ձմեռամուտ ե, աշուն,
Մերը՝ գարուն լուսավառ:

Մեր ուղին գլխի ե վորոշ,
Գնում ենք քանակ առ քանակ.
Մենք ունենք արագույն դրոշ—
Մերն ե շղթանալը:



1925 թ. հունիս—1926 թ. ապրիլ





ՀՀ Ազգային գրադարան



NL0327694

~~53~~

f 680

17.748

25 ԿՈՊ.